ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ» ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Ս. ՆԱԼՂԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 13 ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ
ԹԱՐՄԱՑՎԱԾ

Երևան
Հուլիս 2025

ՄԱՍ Ա: Ընդհանուր ծրագրի և տեղանքի մասին տեղեկատվություն

Կառուցվածքային և վարչարարական տվյալները			
Պետությունը	*Հայաստանի Հանրապետություն*		
Ծրագրի անվանումը	*«Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագիր*		
Տեղանքին հատուկ գործողության շրջանակը	*ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Ս. Նալչռանյանի անվան թիվ 13 ավագ դպրոցի վերակառուցում*		
Կառուցվածքային տվյալները (ՀԲ)	Ծրագրի խմբի ղեկավար՝ Շիզուկա Կումիմոտո	Անվտանգության մասնագետներ՝ Լուսինե Գևորգյան (բնապահպանություն) Սոնյա Մսրյան (սոցիալական)	
Իրականացման տվյալները (ՀՀ)	Իրականացնող կազմակերպություն Կրթական ծրագրերի կենտրոն	Վերահսկող ընկերություն Պարապետ ՍՊԸ	Կապալառու ընկերություն Ախուրյան Կոպշին ՍՊԸ
Ծրագրի և տեղանքի նկարագրությունը			
Ծրագրի նկարագրությունը	Վերակառուցման ենթակա դպրոցը գտնվում է *ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Ոհանոողական փողոց 7 հասցեում*: *ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Ս. Նալչռանյանի անվան թիվ 13 ավագ* դպրոցը կառուցվել է 1974թ., որը բաղկացած է թվով Երեք մասնաշենքերից, որոնցից երկու ուսումնական (թիվ 1 և 2) մասնաշենքերը իրարից գտնվում են 18,3 մ հեռավորության վրա, իսկ 2-րդ մասնաշենքը 3-ից (մարզադահլիճ) 17,1 մ հեռավորության վրա է և բոլոր մասնաշենքերը իրար հետ կապված են տաքանցումով: Բացի նշված մասնաշենքերից, դպրոցի հողամասի տարածքում տեղակայված են նաև օժանդակ շինություն,տրանսֆորմատորային ենթակայան: Դպրոցական համալիրի ուսումնական թվով երկու մասնաշենքերը հատակագծում ուղղանկյունաձև են, որոնք իրար կապվում են տաքանցումով և իրարից բաժանված են հակասեյսմիկ կարաններով: Նշված մասնաշենքերի տանիքները լանջավոր են: Դպրոցական համալիրը իրականացվել է ИИС-04 սերիայի տիպարային նախագծով: Նախատեսվում է դպրոցական համալիրի առաջին, երկրորդ, , տաքանցումային մասնաշենքերի վերակառուցում և նոր մարզադահլիճի շենքի կառուցում: Առաջին և երկրորդ ուսումնական մասնաշենքերը իրար կապող տաքանցումային մասնաշենքը նախատեսվում է եռահարկ, ապահովելու սակավաշարժուն խմբերի աշակերտների հասանելիությունը բոլոր հարկերում: Ուսումնական առաջին մասնաշենքում նախատեսվում է վերելակ: Նախագծով ուսումնական երկրորդ մասնաշենքի նկուղային հարկում նախատեսվում է վերակառուցում՝ նկուղային հարկի մակերեսի ընդլայնումով, որտեղ տեղակայվում է ապաստարան: Դպրոցական համալիրը տեղակայված է միջին թեքությամբ ռելիեֆի վրա: Նախագծման փուլում իրականացվել են ուսումնասիրություններ՝ բացահայտելու համար գոյություն ունեցող շինությունների կառուցվածքային խնդիրները: Դրանց տեխնիկական վիճակի և սեյսմակայունության վերաբերյալ տեխնիկական եզրակացության («Բաբայան-ԼԱՏ նախագիծ» ՍՊԸ, 04.01.2023) համաձայն հայտնաբերվել են հետևյալ կառուցվածքային խնդիրները. • Արտաքին պատային սալերից պոկվել և թափվել են տուֆաքարե երեսապատման սալիկները, • Պատային սալերում կան բետոնի հողմնահարում, որտեղ մերկացել և կոռոզիայի են ենթարկվել ամրանային ձողերը, • Պատային սալերը առանձին տեղամասերում ունեն		

	նստվածքներ և դրանց միջև կարանները հեռացել են իրարից, իսկ առանձին տեղամասերում դրանք լցափակված չեն, • Մասնաշենքի միջնորմները գտնվում են վատթար վիճակում՝ առկա են թեք և հորիզոնական ճաքեր և տարանջատումներ հարակից կրող տարրերից, • Քայքայված են ե/բետոնյա ծածկասալերը, առանձին տեղամասերում դիտվում են սալերի իրարից հեռացում՝ կարանների բացում, իսկ երրորդ և չորրորդ հարկերում դրանք խիստ քայքայված են և ունեն անթույլատրելի ճաքեր, • Քայքայված են նաև առանձին ե/բետոնյա սյուների բետոնի պաշտպանիչ շերտը, իսկ ամրանները մերկացած են և ենթարկվել են խիստ կոռոզիայի: Նախատեսվող վերակառուցման ծրագրի ընացքում ակնկալվում է իրականացնել վերակառուցման և սեյսմակայունության բարձրացմանն ուղղված հետևյալ աշխատանքները. **Առաջին ուսումնական մասնաշենքում.** • Կատարել ներքին տարածքի վերահատակագծում, ըստ տեխնիկական առաջադրանքի, • Հաշվի առնելով, որ դպրոցի վերակառուցվող մասնաշենքերի պատերը իրականացված են ե/բետոնե պատային սալերից (b=24 սմ), որոնք չեն բավարարում տարածաշրջանի ջերմային պահանջներին, ուստի անհրաժեշտ է նախատեսել ջերմամեկուսիչ շապիկ, • Մասնաշենքի աջակողմյան հատվածի երրորդ հարկում կատարել վերակառուցման աշխատանքներ և նախատեսել հանդիսությունների դահլիճ, • Կատարել ներքին տարածքի սվաղման և հարդարման աշխատանքներ, • Կառուցել նոր հատակներ, սանհանգույցներում նախատեսել գլազուրե սալիկներ, • Տեղադրել դռները և պատուհանները, • Սանհանգույցների պատերը երեսապատել հախճասալով, • Կառուցել հակահրդեհային աստիճաններ (արտաքին), • Կառուցել նոր լանջավոր տանիք, • Հանդիսությունների դահլիճում նախատեսվում է կառուցել նոր բեմահարթակ և բեմի կահավորանք **Երկրորդ ուսումնական մասնաշենք**. • Կատարել ներքին տարածքի վերահատակագծում, ըստ տեխնիկական առաջադրանքի, • Կատարել ներքին տարածքի սվաղման և հարդարման աշխատանքներ, • Հաշվի առնելով, որ դպրոցի վերակառուցվող մասնաշենքերի պատերը իրականացված են ե/ բետոնե պատային սալերից (b= 24 սմ), որոնք չեն բավարարում տարածաշրջանի ջերմային պահանջներին, ուստի անհրաժեշտ է կառուցել նոր պատեր՝ բետոնե ծակոտկեն բլոկներից, ինչպես նաև նախատեսել ջերմամեկուսի, շապիկ, համանման առաջին մասնաշենքի նույնատիպ աշխա-տանքներին, - • Կառուցել նոր հատակներ, սանհանգույցներում նախատեսել գլազուրե սալիկներ, • Տեղադրել դռները և պատուհանները, - • Կառուցել հակահրդեհային աստիճաններ (արտաքին), • Սանհանգույցների պատերը երեսապատել հախճասալով • Կառուցել նոր լանջավոր տանիք: **Երրորդ նոր կառուցվող (մարզադահլիճ) մասնաշենք**. Նոր կառուցվող սպորտային մասնաշենքը իրենից ներկայացնում է 2753 խմ ծավալով, 30 մարզվողների և 70 հանդիսականների

	համար նախատեսված շինություն: Այն բաղկացած է 412 քմ մակերեսով մարզասրահից, 3 սանհանգույցներից, մարզիչի սենյակից, 2 հանդերձարաններից, 2 ցնցուղարաններից և մարզական գույքի սենյակից: Մարզադահլիճի ջեռուցումը իրականացվելու է ֆանկոյլների միջոցով: Շենքը ապահովվված է լինելու ավտոմատ հրդեհային և ազդարարման համակարգով: Շինության տանիքը թեք է՝ մետաղական ցինկապատ պրոֆիլներով: Սենքը ապահովված է ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերով: Սենքի հարդարման բոլոր նյութերը պետք է լինեն էկոլոգիապես մաքուր, համապատասխանեն հրդեհային անվտանգության, սանիտարահիգիենիկ և այլ գործող պահանջներին: Մարզադահլիճի շենքում նախատեսվում են պատերի ծեփամածկում, հարթեցում, բարձրորակ լատեքսային ներկում (անփայլ), իսկ հանդերձարանների և սանհանգույցների պատերինը՝ կերամոգրանիտե սալիկներով երեսապատում: Մարզադահլիճի հատակները կիրականացվեն սպորտային վինիլային ծածկույթով, բացառությամբ աստիճանավանդակների և աստիճանահարթակների սենքերի, իսկ հանդերձարանների և սանհանգույցների հատակները՝ մամլոգրանիտե կամ գլազուրե սալիկներով: Էներգաարդյունավետության/էներգախնայողության/ հետ կապված բոլոր նյութերը, սարքավորումները և շինվածքները նախագծված են «Հայաստանի Հանրապետությունում նոր կառուցվող և վերակառուցվող բնակելի, հասարակական և արտադրական շենքերի պատող կոնստրուկցիաների ջերմամեկուսացման տեխնիկական լուծումների» խորհրդատվական ձեռնարկին համապատասխան: **Տաքանցումային մասնաշենքերում նախատեսվում են.** • Կատարել ներքին տարածքի վերահատակագծում, ըստ տեխնիկական առաջադրանքի, • Հաշվի առնելով, որ դպրոցի հիմնանորոգվող մասնաշենքերի պատերը իրականացված են քարա-շարվածքով (b= 20 սմ), որոնք չեն բավարարում տարածաշրջանի ջերմային պահանջներին, ուստի անհրաժեշտ է նախատեսել ջերմամեկուսիչ շապիկ, ինչպես առաջին և երկրորդ մասնաշենքերում, • Կատարել ներքին տարածքի սվաղման և հարդարման աշխատանքներ, • Տեղադրել դռները և պատուհանները (կամ վիտրաժները), • Կառուցել նոր լանջավոր տանիք, • Տաքանցումներում նախատեսվում են հակասեյսմիկ կարաններ, Տաքանցումային այն մասնաշենքը (թիվ 1 և 2 մասնաշենքերը կապող), որում նախատեսվում է վերակառուցում, կատարել հետևյալ լրացուցիչ աշխատանքները. ✓ Ամրացնել նրա հիմքերը, կոնստրուկտիվ հաշվարկներից ելնելով, ✓ Ամրացնել ե/բետոնյա սյուները անկյունակներով, ցանց բետոնյա շերտով, իսկ սյուների վերևի մասում նախատեսել ամրակապման ձողեր, թվով երկու վերնահարկերի կառուցման համար, ✓ Ամրացնել ե/բետոնե պարզունակները և գոյություն ունեցող տանիքածածկից վերև իրականացնել նոր, եռահարկ հիմնակմախքի կառուցում: **Նախատեսվում են նաև.** • Տարածքի բարեկարգում, տարածքից կազմակերպված ջրահեռացում, մարզական մակերեսների կառուցում, նոր եզրաքարերի և սիզամարգերի կառուցում, ցանկապատ,

	• Հաշվի առնելով տարածքի ռելիեֆային պայմանները և ջրահեռացման առանձնասենյակները, դպրոցի տարածքում նախատեսվում է հենապատերի կառուցում, դրենաժային համակարգի իրականացում, • Տարածքում գոյություն ունեցող նախկին տրանսֆորմատորային ենթակայանը վերակառուցվում և փոխարինվում է լոկալ կաթսայատան: Քանի որ շինարարական աշխատանքների իրականացման տևողությունը գնահատված է 24 ամիս, համապատասխան համաձայնություններ են ձեռք բերվել վերականգնվող դպրոցում ուսուցանող աշակերտների ուսուցման անվտանգ և հարմար գործընթացն պահովելու նպատակով: Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակ ուսուցման գործընթացը կտեղափոխվի այլ դպրոց: Ուսուցումը տեղի կունենա Շինարարների 12 հասցեում: ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը կկառավարի գործընթացը համապատասխան որոշումների միջոցով: Կապալառուին կտրամադրվի դատարկ դպրոցը՝ շինարարական աշխատանքների իրականացման նպատակով (Կապալառուն տեղափոխման հետ կապված որևէ պարտականություն չի ունենալու). *ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Ս. Նալչռանյանի անվան թիվ 13 ավագ դպրոցի* վերակառուցման վերջնական նախագիծը կազմվել է “Բաբայան-Լատ նախագիծ” ՍՊԸ-ի կողմից:
Դպրոցի անվանումը	*ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Ս. Նալչռանյանի անվան թիվ 13 ավագ դպրոց*
Դպրոցի հասցեն և գտնվելու վայրը	Դպրոցի հասցեն է՝ *ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Ոխանողական փողոց 7*: Ծրագրի իրականացման տեղանքը տեղակայված է ՀՀ *Լոռու* մարզի *Վանաձոր* քաղաքում, Երևան քաղաքից մոտ 125 կմ հեռավորության վրա: Ծրագրի տեղանքը գտնվում է քաղաքային միջավայրում: Բոլոր աշխատանքները նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող դպրոցի տարածքում:
Հողօգտագործումը	Դպրոցի հողակտորը և դրա վրա գտնվող շինությունները հանդիսանում են դպրոցի/ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության սեփականությունը: Հողակտորի մեծությունը կազմում է 1.135 հա: Դպրոցի շինության մակերեսը կազմում է 6598.1 ք.մ,: Դպրոցի հողակտորի վրա և շինություններում չի իրականցվում որևէ ձեռնարկատիրական գործունեություն: Դպրոցի տարածքում առկա են 38 ծառեր: Կհատվի 3 ծառ, որոնց փոխարեն կտնկվեն 14 նոր ծառեր:
Տեղանքի ֆիզիկական և բնական միջավայրի հակիրճ նկարագրությունը; Սոցիալական և դեմոգրաֆիկ ենթատեքստը	Վերակառուցման ենթակա դպրոցը գտնվում է գտնվում է ՀՀ *Լոռու* մարզի *Վանաձոր* քաղաքում: *Լոռու* մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիսում: Լոռու մարզը զբաղեցնում է ՀՀ տարածքի 12.8 %-ը:Վանաձոր քաղաքը Լոռու մարզկենտրոնն է, գտնվում է Հայաստանի հյուսիսային մասում՝ Փամբակ գետի հովտում, հյուսիսից շրջապատված է Փամբակի և Բազումի լեռներով: Զբաղեցնում է 2599.33 հա մակերես: Զբաղեցրած տարածքի հիմնական մասը ծովի մակերևույթից բարձր է 1353 մ: Քաղաքի արդյունաբերական գոտին կազմում է 678հա: Ծովի մակերևույթից միջին բարձրությունը 1350մ է, կառուցապատված տարածքի բարձր կետը 1490մ է: Քաղաքամերձ տարածքում՝ նրա հարավարևմտյան մասում, գտնվում է Լոռու մարզի ամենաբարձր՝ Մայմեխ լեռը, բարձրությունը՝ 3082մ: Քաղաքն ունի մեղմ, բարեխառն կլիմա: Վանաձորի տարածքի կլիմայական պայմաններին բնորոշ է չափավոր, տարվա բոլոր եղանակներին համեմատաբար խոնավ կլիման: Տարեկան տեղումների ընդհանուր քանակը կազմում է 600-700 մմ, և այդ տեսակետից այս շրջանը հանրապետությունում

	զբաղեցնում է առաջին տեղերից մեկը: Վանաձորի օդի տարեկան միջին ջերմաստիճանը 8.50 C է, առավելագույնը՝ 30.0 C, նվազագույնը՝ -30.0 C, ջերմային ռեսուրսներով ապահովվածությունը միջին չափի է, գոլորշիացումը՝ չափավոր (տարեկան 650 մմ): Ձմեռը չափավոր ցուրտ է, երեք ամսվա օդի միջին ջերմաստիճանը -3,3^{0}C է, բացարձակ նվազագույնը՝-30^{0}C, հունվարի միջինը՝ -5^{0}C: Տարվա ընթացքում ձյան ծածկոցը (18-25 սմ) գերազանցում է 77 օրը, կայուն ծածկույթն առաջանում է դեկտեմբերի երրորդ տասնօրյակում, երբեմն նոյեմբերի կեսերին և վերանում մարտի առաջին տասնօրյակում (ամենաուշը մարտի 31-ին): Հենց այս ժամանակահատվածում է թափվում տարեկան ընդհանուր տեղումների մոտավորապես 11%-ը: Մարզում ոչ սառնամանիքային օրերի միջին թիվը 174 է: Գարունը չափավոր սառն է, երկարատև, 6,7^{0}C միջին ջերմաստիճանով, 209 մմ (տարեկան ընդհանուր նորմայի 32,6%-ը) տեղումներով, որից 79-133 մմ-ը ընկնում է մայիս ամսին: Գարնանային ցրտահարությունները միջին հաշվով նկատվում են ապրիլի 26-ին (ամենավաղը ապրիլի 5-ին, ամենաուշը՝ մայիսի 21-ին): Ամառը չափավոր շոգ է: Ամենաշոգ ամսվա՝ օգոստոսի միջին ջերմաստիճանը չի գերազանցում 18-200C-ը, իսկ երեք ամսվա միջինը 17,30C է: Օգոստոսին նկատվում է նաև տեղումների նշանակալից կրճատում, որոնց քանակը հասնում է 40-60 մմ-ի: Վանաձոր քաղաքի դենդրոֆլորայի կազմում գերիշխող թիվ են կազմում առաջին մեծության տերևաթափ ծառերը՝ 34.42%, առաջին մեծության փշատերև ծառերը՝ 11.5 % և առաջին մեծության տերևաթափ թփերը՝ 11.5 %, քանի որ դրանց համար տեղի բնակլիմայական պայմաններն ավելի նպաստավոր են: Վանաձոր քաղաքը գտնվում է Հայաստանի ամենաբարձր սեյսմոակտիվ գոտիներից մեկի՝ Փամբակ-Սևանի ակտիվ բեկվածքի ազդեցության սահմաններում: Ըստ Հայաստանի Հանրապետության սեյսմիկ շրջանացման հավանականային քարտեզի՝ այստեղ հողի սպասվող հորիզոնական արագացման մեծությունը կազմում է 0.5g (9-10 բալ): Խորհրդային տարիներին Վանաձորը եղել է արդյունաբերական և զբոսաշրջային քաղաք: Ներկայումս համարվում է Հայաստանի արդյունաբերական կենտրոններից մեկը: Վանաձորի տեսարժան վայրերի թվին են պատկանում քաղաքի կենտրոնական Հայքի հրապարակը, Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցին, Թայիրովի ամառանոցը, Շառլ Ազնավուրի անվան մշակույթի պալատը, Վանաձորի դրամատիկական թատրոնը, Կերպարվեստի թանգարանը և Ստեփան Զորյանի տուն-թանգարանը: Վանաձոր քաղաքի մշտական բնակչության թվաքանակը, ըստ պաշտոնական տվյալների, կազմում է 86199 մարդ, որից իգական սեռի ներկայացուցիչների թիվը 46572 է, արականների թիվը՝ 39627: Ծրագրի սոցիալական արդյունքները ակնկալվում է, որ կլինեն դրական: Ներկայումս *ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Ս. Նալբանդյանի անվան թիվ 13* ավագ դպրոցում ուսանում է 143 աշակերտ (ներառյալ 85 տղա և 58 աղջիկ), ինչպես նաև դպրոցն ն ունի 31 աշխատակից (որից 9-ը տղամարդ են և 22-ը՝ կին):
Մոտակա գոյություն ունեցող լիցենզավորված շինարարական նյութերի հանքի, քարհանքի և ջրաղբյուրի տեղակայման վայրը	Գոյություն ունեցող դպրոցը միացած է ջրամատակարարման և կոյուղու համակարգերին: Շինարարական աշխատանքների համար մատակարարվող ջուրը վերցվելու է համայնքի ղեկավարի և դպրոցի տնօրենի հետ համաձայնեցված աղբյուրից (եթե առաջարկվում է օգտագործել դպրոցի համակարգերը): Լցանյութերը պետք է ստացվեն լիցենզավորված վաճառողներից՝ ցանկալի է ծրագրի իրականացման տարածաշրջանից: Կապալառուները կարող են բացել և շահագործել նոր հանքեր, սակայն այս դեպքում նրանք պարտավոր են ստանալ լիցենզիա նախքան աշխատանքները սկսելը: Բոլոր նյութերը գնվելու են պաշտոնական մատակարարից: Որևէ

	վտանգավոր նյութ (ազբեստ պարունակող նյութեր, կապար պարունակող ներկեր և այլն) չպետք է օգտագործվեն վերանորոգման աշխատանքների ժամանակ:
Օրենսդրությունը	
Տեղական օրենսդրությունը և թույլտվությունները որոնք վերաբերում են ծրագրային գործունեությանը	Բնապահպանական թույլտվությունները, որոնք անհրաժեշտ են ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման համար, հետևյալն են. ➢ շինարարության լիցենզիա՝ տրված շինարարական աշխատանքներ իրականացնող կապալառուին, ➢ շինարարության թույլտվություն՝ տրված շինարարական աշխատանքներ իրականացնող կապալառուին համայնքի ղեկավարի կողմից, ➢ հանքի շահագործման լիցենզիա՝ տրված շինարարական աշխատանքներ իրականացնող կապալառուին, այն դեպքում եթե նա շահագործում է հանքը, ➢ շինարարական աղբի տեղադրման համաձայնություն՝ տրված շինարարական աշխատանքներ իրականացնող կապալառուին համայնքի ղեկավարի կողմից: Բոլոր նորմերը հաստատված են ՀՀ Քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից թիվ 82հրաման 10.01.2001:
Հանրային խորհրդակցությունը	
Տվյալներ երբ / որտեղ են իրականացվել / իրականացվելու են հանրային խորհրդակցությունները	Հանրային խորհրդակցությունն իրականացվել է ծրագրային համայնքում: Քննարկվել է Համաշխարհային բանկի կողմից վերանայված ԲՍԿՊ-ն և տեղական շահառուների կողմից հնչեցված հարցերը և մտահոգությունները հաշվի են առնվել: Հանրային քննարկումները կազմակերպվել են հանրային քննարկման և ծանուցումների իրականացման կարգի համաձայն, ըստ որի հանդիպումից նվազագույնը 7 օր առաջ հանդիպման վերաբերյալ մամրամասն տեղեկատվությունը եղել հասանելի հանրության համար «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2023թ. ապրիլի 27-ի համարում, «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի պաշտոնական կայքում (info@cfep.am), ինչպես նաև խորհրդակցության հայտարարությունը նախօրոք փակցվել է համայնքում՝ ծնողները, ուսուցիչները և դպրոցի այլ աշխատակիցները տեղեկացվել են դրա մասին: Հավելված 7-ում ներկայացված է հանրային խորհրդակցության արձանագությունը, հանդիպման մասնակիցների ցանկը և նկարները: Թարմացված ԲՍԿՊ-ի համար հանրային խորհրդակցությունն իրականացվել է ծրագրային համայնքում: Քննարկվել է Համաշխարհային բանկի կողմից վերանայված ԲՍԿՊ-ն և տեղական շահառուների կողմից հնչեցված հարցերը և մտահոգությունները հաշվի են առնվել: Հանրային քննարկումները կազմակերպվել են հանրային քննարկման և ծանուցումների իրականացման կարգի համաձայն, ըստ որի հանդիպումից նվազագույնը 7 օր առաջ հանդիպման վերաբերյալ մամրամասն տեղեկատվությունը եղել հասանելի հանրության համար ԾԻԳ-ի պաշտոնական կայքում (info@cfep.am), ինչպես նաև խորհրդակցության հայտարարությունը նախօրոք փակցվել է համայնքում՝ ծնողները, ուսուցիչները և դպրոցի այլ աշխատակիցները տեղեկացվել են դրա մասին: Հավելված 7-ում ներկայացված է նաև թարմացված ԲՍԿՊ հանրային խորհրդակցության արձանագությունը, հանդիպման մասնակիցների ցանկը և նկարները:
Հավելվածները	

Հավելված 1. Ծրագրի տարածքի քարտեզ
Հավելված 2. Ծրագրի տարածքի և շինության ներսի լուսանկարներ
Հավելված 3. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական
Հավելված 4. Շենքի տեխնիկական վիճակի և սեյսմակայունության վերաբերյալ տեխնիկական եզրակացությունը
Հավելված 5. Շին. թույլտվություն
Հավելված 6. Աղբի հեռացման համաձայնագիր
Հավելված 7. Հանրային խորհրդակցության արձանագրություն

ՄԱՍ Բ: ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ / ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ			
	Գործունեություն / խնդիր	**Կարգավիճակ**	**Գործարկված պահանջները**
Արդյո՞ք տեղանքում գործունեությունը ներառում է հետևյալներից որևէ մեկը	1. Շինության վերականգնում	[x] Այո [ ] Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Ա-ն ստորև
	2. Նոր շինարարություն	[x] Այո [ ] Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Ա-ն ստորև
	3. Կեղտաջրերի մշակման առանձին համակարգ	[ ] Այո [x] Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Բ-ն ստորև
	4. Պատմական շենքեր և շրջաններ	[ ] Այո [x] Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Գ-ն ստորև
	5. Հողի օտարում[1]	[ ] Այո [x] Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Դ-ն ստորև
	6. Վտանգավոր կամ թունավոր նյութեր[2]	[ ] Այո [x] Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Ե-ն ստորև
	7. Ազդեցություններ անտառների կամ պահպանվող տարածքների վրա	[ ] Այո [x] Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Զ-ն

[1]Հողի օտարումը ներառում է մարդկանց տեղահանումը, ապրուստի փոփոխությունը, մասնավոր սեփականություն մուտք գործելը, որը վերաբերում է գնված / փոխանցված հողին, ազդեցություն է թողնում օտարվող հողի վրա ապրող և/կամ ինքնական տեղավորված և/կամ գործունեություն վարող (օրինակ՝ տաղավար ունեցող) մարդկանց վրա:
2Թունավոր / վտանգավոր նյութերը ներառում են, սակայն սահմանափակված չեն ասբեստով, թունավոր ներկերով, թունավոր լուծիչներով, կապար պարունակող ներկի հեռացմամբ և այլն: ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 9-ի N 2291-Ն որոշում <<Թափոնների գոյացման նորմատիվների եվ դրանց տեղադրման սահմանաքանակների նախագծերի հաստատման կարգ>>, ՀՀ օ ր ե ն ք ը Թափոնների մասին՝ ընդունված՝ 2004 թվականի նոյեմբերի 24-ին, ՀՀ Բնապահպանության նախարարի 25.12.2006 N430-ն հ ր ա մ ա ն <<Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին>>

			ստորև
	8. Բժշկական թափոնների հեռացում/ կառավարում	[ ] Այո [x] Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Է-ն ստորև
	9. Երթևեկության և հետիոտների անվտանգություն	[x] Այո [ ] Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Ը-ն ստորև
	10. Սոցիալական ռիսկ	[x] Այո [ ] Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Թ-ն ստորև

ՄԱՍ Գ: ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ՑՈՒՑԱՆԻՇ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԻՉ-ՑԱՆԿ
0. Ընդհանուր պայմաններ	Տեղեկությունների տրամադրում և աշխատողների անվտանգություն	(ա) Տեղական շինարարական և բնապահպանական տեսչություններն ու համայնքները տեղեկացված են նախատեսվող միջոցառումների վերաբերյալ (բ) Հասարակությունը տեղեկացված է նախատեսվող աշխատանքների մասին լրատվամիջոցների օգնությամբ և/կամ հասարակական վայրերում՝ ներառյալ աշխատանքների կատարման վայրը) (գ) Ձեռք են բերվել շինարարական և/կամ վերականգնման աշխատանքների կատարման համար պահանջվող բոլոր թույլտվությունները (դ) Կապալառուն պաշտոնապես համաձյանում է, որ բոլոր աշխատանքները իրականացվեն պատշաճ կերպով, պահպանելով անվտանգության պահանջները՝ հարևան բնակիչների ու շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները նվազեցնելու նպատակով (ե) Աշխատողների անհատական պաշտպանիչ արտահագուստը (ԱՊԱ) պետք է համապատասխանի միջազգային լավագույն փորձին (սաղավարտներ, անհրաժեշտության դեպքում դիմակներ և ակկոցներ, պաշտպանիչ բաճկոնակներ և կոշիկներ) (զ) Շինարարական հրապարակում համապատասխան տեղեկատվական ցուցանակների տեղադրումը հնարավորություն կտա տեղեկացնելու բանվորներին հիմնական կանոնների վերաբերյալ, որոնց անհրաժեշտ է հետևել աշխատանքներ իրականացնելիս
Ա. Վերականգնման և / կամ շինարարական աշխատանքներ	Օդի որակ	(ա) Առաջին հարկից վերև ներսում քանդման աշխատանքների իրականացման ժամանակ պետք է կիրառվեն աղբահան խողովակներ, (բ) Քանդված մնացորդները, փորված հողը և նյութերը պետք է պահվեն վերահսկվող տարածքում և դրանց վրա պետք է ջուր ցողալ՝ փոշին նստեցնելու նպատակով (գ) Պնևմատիկ փորման կամ ծածկի ու հիմքերի քանդման ժամանակ, փոշին պետք է նստեցնել անընդհատ ջուր ցողալով և/կամ հրապարակում տեղադրելով փոշին նստեցնող ծածկոց (դ) Շրջակա միջավայրը (մայթերը, ճանապարհը) պետք է զերծ պահվի հողից և մնացորդներից՝ փոշու առաջացումը նվազեցնելու նպատակով (ե) Շինարարական հրապարակում շինարարական թափոնների բացօդյա այրումը չի թույլատրվում (զ) Շինարարական հրապարակներում մեքենաները չպետք է պարապուրդի մատնվեն
	Աղմուկ	(ա) Շինարարության ընթացքում աղմուկի առաջացումը պետք է սահմանափակվի համաձայնեցման մեջ նշված ժամերով (բ) Աշխատանքի ընթացքում պետք է օգտագործվեն փակ/ծածկված գեներատորներ, օդի կոմպրեսորներ և այլ մեխանիկական սարքավորումներ, սարքավորումները պետք է տեղադրվեն բնակելի տարածքներից հնարավորիս հեռու
	Ջրի որակ	(ա) Հրապարակում պետք է իրականացվեն էրոզիայի և նստվածքների կարգավորման համապատասխան միջոցառումներ, օրինակ՝ տեղադրվեն հարդի պարկեր և/կամ նստվածքի հեռացման ցանցեր՝ նստվածքների հրապարակից հեռացումը, և ջրահեռացման համակարգում ու մոտակա ջրհոսքերում և գետերում

		ավելցուկային տուրբուլենտությունը կանխելու նպատակով
	Թափոնների կառավարում	(ա) Աղբի հավաքումը, դրա հեռացման ուղիները և տեղադրման վայրերը պետք է հստակեցվեն աղբի հիմնական տեսակների համար, որոնք կառաջանան փորումից, քանդումից և շինարարական գործունեությունից (բ) Շինարարական և քանդման աշխատանքներից առաջացած հանքային թափոնները պետք է առանձնացվեն օրգանական, հեղուկ և քիմիական թափոններից՝ տեղանքում դրանց բաժանումը իրականացնելով և համապատասխան կոնտեյներներում պահելով, (գ) Շինարարական աղբը պետք է հավաքվի և տեղադրվի աղբավայրում՝ պատշաճ կերպով հավաստագրված հավաքողների կողմից (դ) Շինարարական աղբի հեռացման վերաբերյալ պետք է կատարվեն գրառումներ, ինչը հնարավորություն կտա երաշխավորելու պատշաճ կառավարումը (ե) Հնարավորության դեպքում կապալառուն կիրականացնի պիտանի նյութերի վերամշակում և դրանց կրկնակի օգտագործում (ասբեստ պարունակող նյութերի բացառությամբ)
Բ. Կեղտաջրերի մշակման առանձին համակարգ	Ջրի որակ	(ա) Սանիտարական աղբի և շինարակական հրապարակներից (տեղադրում կամ վերակառուցում) եկող կեղտաջրերի մշակման մոտեցումները պետք է հաստատվեն տեղական իշխանությունների կողմից (բ) Նախքան ջրերի թափումը, կեղտաջրերի մշակման առանձին համակարգերից արտահոսող աղտոտիչները պետք է մշակվեն՝ աղտոտիչների որակի և կեղտաջրերի մշակման ազգային ուղեցույցերով սահմանված որակի նվազագույն չափանիշներից համապատասխանելու նպատակով (գ) Պետք է իրականացվի նոր կեղտաջրերի մշակման համակարգերի մոնիտորինգ (մինչև / հետո) (դ) Շինարարական մեքենաները և սարքավորումը պետք է լվացվեն հատուկ այն նպատակով սահմանված վայրերում, որտեղից ջրի արտահոսքը չի առաջացնի մակերևութային բնական ջրերի աղտոտում
Գ. Պատմական շինություն(ներ)	Մշակութային ժառանգություն	(ա) Եթե շինարարական աշխատանքներն իրականացվում են պատմական շինության մոտակայքում կամ պատմական տարածքում, ծանուցում պետք է ուղարկվի և համաձայնություններ / թույլտվություններ ստացվեն տեղական իշխանություններից, և բոլոր շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն ազգային օրենսդրության պահանջների համաձայն (բ) Հողային կամ շինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերված պատահական գտածոները պետք է գրանցվեն, տեղեկատվությունը պետք է տրամադրվի պատասխանատու մարմիններին, աշխատանքները պետք է հետաձգվեն կամ դրանց կատարման վայրը փոփոխվի՝ գտածոների հետագա պարզելու նպատակով
Դ. Հողի օտարում	Հողի օտարման պլան / շրջանակ	(ա) Եթե հողի օտարում չէր ակնկալվում, սակայն պահանջվում է, կամ եթե օրինական և ոչ օրինական օգտագործողների եկամուտի վրա ազդեցություն չէր ակնկալվում, սական կարող է առաջանալ, ապա Բանկի խմբի ղեկավարը պետք է անմիջապես տեղեկացվի (բ) Հաստատված Հողի օտարման պլանը / շրջանակը (եթե այն պահանջվում է ծրագրի համար) պետք է իրականացվի
Ե. Թունավոր նյութեր	Ասբեստի կառավարում	(ա) Եթե ասբեստը տեղակայված է ծրագրի տարածքում, այն պետք է հստակ մակնշված լինի որպես վտանգավոր նյութ

		(բ) Հնարավորության դեպքում ասբեստը պետք է ծածկված լինի՝ դրա ազդեցությունը նվազեցնելու նպատակով (գ) Նախքան հեռացումը (եթե հեռացումն անհրաժեշտ է) ասբեստը պետք է մշակվի խոնավ նյութով՝ փոշու առաջացումը նվազեցնելու նպատակով (դ) Ասբեստը պետք է մշակվի և հեռացվի փորձառու և մասնագիտացած անձնակազմի կողմից (ե) Եթե ասբեստ պարունակող նյութերը չեն կարող պահվել ժամանակավորապես, թափոնները պետք է պահվեն կոնտեյներների մեջ՝ համապատասխան մակնշումով: Անվտանգության միջոցառումներ պետք է իրականացվեն՝ հրապարակից դրանց չարտոնագրված հեռացումը բացառելու նպատակով (զ) Հեռացված ասբեստի կրկնակի օգտագործումը չի թույլատրվում
	Թունավոր / վտանգավոր թափոնների կառավարում	(ա) Վտանգավոր և թունավոր նյութերի ժամանակավոր պահպանումը պետք է իրականացվի ապահով կոնտեյներներում՝ նշելով դրանց բաղադրության, հատկությունների և մշակման վերաբերյալ տեղեկությունները (բ) Վտանգավոր նյութեր պարունակող կոնտեյներները պետք է տեղադրվեն անջրաթափանց կոնտեյների վրա՝ արհատոսքը բացառելու նպատակով (գ) Թափոնները պետք է տեղափոխվեն հատուկ հավաստագրված փոխադրողների կողմից և տեղադրվեն հավաստագրված վայրում (դ) Թունավոր բաղադրիչներ պարունակող ներկերի կամ լուծիչների կիրառումը չի թույլատրվում
Զ. Ազդեցություններ անտառների, գերխոնավ և/կամ պահպանվող տարածքների վրա	Էկոհամակարգի պահպանություն	(ա) Բոլոր ընդունված բնադրավայրերը, գերխոնավ և պահպանվող տարածքները, որոնք գտնվում են հրապարակի անմիջական մոտակայքում չպետք է վնասվեն կամ օգտագործվեն, աշխատակազմին պետք է խիստ արգելվի իրականացնել որս, խետահավաք, ջրածածկում կամ այլ վնասակար գործողություններ (բ) Շինարարական հրապարակի մոտակայքում խոշոր ծառերը պետք է ուսումնասիրվեն և հաշվառվեն, խոշոր ծառերը պետք է մակնշվեն և ցանկապատվեն, արմատային համակարգը պետք է պաշտպանվի և ծառերին վնաս հասցնելը՝ բացառվի (գ) Հարակից գերխոնավ տարածքները և ջրահոսքերը պետք է պահպանվեն արտահոսքից՝ էրոզիան և նստվածքի առաջացումը կարգավորող համապատասխան միջոցառումների իրականացման միջոցով, որոնք ներառում են սակայն սահմանափակված չէն հարդի պարկերի և նստվածքների հեռացման ցանցերի տեղադրմամբ (դ) Չհավաստագրված հանքավայրերի, քարհանքերի, աղբավայրերի օգտագործումը չի թույլատրվում՝ հատկապես պահպանվող տարածքներում
Է. Բժշկական թափոնների հեռացում	Բժշկական թափոնների կառավարման ենթակառուցվածքներ	(ա) Համաձայն տեղական օրենսդրության՝ կապալառուն պետք է ապահովի, որ նոր կառուցված և/կամ վերակառուցված առողջապահական կառույցները ներառում են բավարար ենթակառուցվածքներ բժշկակաղ թափոնների կառավարման և հեռացման համար, ինչը ներառում է, սակայն չի սահմանափակվում հետևյալով. • հավաքված բժշկական թափոնների համար հատուկ կառույցները (ներառյալ սուր գործիքները, մարդու մարմնի հյուսվածքները և հեղուկները) ստացված այլ թափոնների հեռացումից, և • բժշկական թափոնների պահման համապատասխան կառույցների առկայությունը, և

		• թե գործունեությունը ներառում է ներքին մշակումը, ապա հեռացման համապատասխան հնարավորությունները առկա են և աշխատունակ
Ը. Երթևեկության և հետիոտնի անվտանգություն	Շին. աշխատանքների իրականացման արդյունքում հանրային երթևեկությանը և հետիոտնին հասցված ուղղակի կամ անուղղակի վնաս	(ա) Համաձայն տեղական օրենսդրության՝ կապալառուն պետք է ապահովի շինարարական հրապարակի անվտանգությունը և երթևեկության կարգավորումը: Այս միջոցառումները ներառում են, սակայն չեն սահմանափակվում • ցուցապաստառների, զգուշացնող նշանների, արգելափակողների տեղադրմամբ, երթևեկության շրջանցող ուղիների ապահովմամբ՝ շինարարական հրապարակը լավ տեսանելի դարձնելու և բնակչությանը հնարավոր վտանգների մասին զգուշացնելու նպատակով • երթևեկության կառավարման համակարգի առկայությամբ և անձնակազմի ուսուցմամբ, հատկապես շինարարական տեղանք մուտք գործելու և հրապարակի մերձակայքում ցանրաբեռնված երթևեկության դեպքում • Աշխատանքային ժամերի փոփոխմամբ՝ համապատասխանեցնելով դրանք տեղական երթևեկության առանձնահատկություններին, օրինակ՝ պիկային ժամերին կամ անասունների տեղաշարժի ժամերին փոխադրումների կատարումից խուսափելով • Անհրաժեշտության դեպքում՝ պատրաստված անձնակազմի կողմից երթևեկության կառավարման իրականացմամբ ՝ հրապարակում մարդկանց անվտանգ տեղաշարժն ապահովելու նպատակով • Շինարարության ընթացքում գրասենյակային կառույցների, խանութների և բնաչիկների անվտանգ ու շարունակական հասանելիության ապահովմամբ
Թ. Սոցիալական ռիսկ	Հանրային հարաբերությունների կառավարում	• բնակչության կողմից դիմում-բողոքներ ստանալու համար տեղում կապալառուի թիմից պատասխանատու նշանակել • խորհրդակցել տեղական համայնքների հետ՝ արտաքին աշխատուժի և տեղի բնակչության միջև հնարավոր հակամարտությունները բացահայտելու և կանխարգելելու նպատակով • բարձրացնել տեղական համայնքի իրազեկությունը սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների ռիսկի վերաբերյալ, կապված արտաքին աշխատուժի ներկայության հետ եւ տեղական համայնքներին ներգրավել իրազեկման աշխատանքներում: • բնակչությանը պատշաճ կերպով տեղեկացնել շինարարության, ծառայությունների ընդհատման, երթևեկության շրջանցման երթուղիների, ժամանակավոր ավտոբուսային երթուղիների, պայթեցման և քանդման աշխատանքների գրաֆիկների մասին: • սահմանափակել գիշերային ժամերի շինարարական աշխատանքները: Անհրաժեշտության դեպքում համոզվել, որ գիշերային աշխատանքները պատշաճ կերպով է կազմակերպվում և իրականացվում, ինչպես նաև համայնքը պատշաճ կերպով տեղեկացված է: • առնվազն հինգ օր առաջ տեղի բնակչությանը տեղյակ պահել մատուցվող ծառայությունների հնարավոր խափանումների մասին (ներառյալ ջուր, էլեկտրականություն, հեռախոս, ավտոբուսային երթուղիներ)՝ հասարակական վայրերում, ավտոբուսի կանգառներում, բնակելի տներիև հարակից շինությունների մոտ տեղադրելով պաստառներ,

		• Կապալառուի պատասխանատվության շրջանակներում գործատուի կողմից սահմանված ժամանակահատվածում ի հայտ եկած խնդիրների լուծում՝ բողոքների մեխանիզմի միջոցով • Հնարավորության դեպքում աշխատանքային ճամբարները չպետք է տեղակայվեն տեղական համայնքներին մոտ: • Աշխատանքային ճամբարների տեղադրումը և շահագործումը պետք է իրականացվի հարևան համայնքների հետ խորհրդակցելով
	Աշխատուժի կառավարում	• Կապալառուն տեղական համայնքներից կներգավի չորակավորված կամ ցածր որակավորում ունեցող աշխատողներ: Իսկ հնարավորության դեպքում կկազմակերպի ուսուցում, որպեսզի խթանվի տեղի բնակչության ներգրավվածությունը իրականացվող աշխատանքներում: • Կապալառուն աշխատանքների իրականացման վայրում կապահովի հիգիենայի համար համապատասխան սարքերով (զուգարաններ և լվացքատներ), տաք և հոսող սառը ջրի, օճառի եւ ձեռքի չորացման, ախտահանման համար անհրաժեշտ նյութերի մատակարարմամբ: Ցանկացած բնակելի աշխատանքային ճամբարի համար պետք է ստեղծվի ժամանակավոր սեզոնային ախտահանման համակարգ՝ առանց հարևան ջրատարների աղտոտման • Կապալառուն պետք է բարձրացնի աշխատողների իրազեկությունը տեղի բնակչության հետ ընդհանուր հարաբերությունների վերաբերյալ, համաձայն միջազգային պրակտիկայի հաստատի և խստորեն պահպանի վարքագծի կանոնները, և անհրաժեշտության դեպքում օգտագործի համապատասխան պատժիչ միջոցառումներ՝ ներառյալ աշխատողներին աշխատանքից ազատելը և ֆինանսական տույժերը:

ՄԱՍ Դ: ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

Գործողություն	Ո՞ր (ցուցանիշն է ենթակա մոնիտորինգի)	Որտե՞ղ (է կատարվում ցուցանիշի մոնիտորինգը)	Ինչպե՞ս (է կատարվում ցուցանիշի մոնիտորինգը)	Ե՞րբ (սահմանել հաճախականությունը / կամ անընդհատ)	Ինչո՞ւ (է կատարվում ցուցանիշի մոնիտորինգը)	Ո՞վ (է պատասխանատու մոնիտորինգի համար)
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՓՈՒԼ						
Կապալառուի մոբիլիզացում	համայնքը և դպրոցի ադմինիստռացիան տեղեկացված են նախատեսվող աշխատանքների վերաբերյալ	դպրոցի տնօրենի գրասենյակում	քննարկում/ տեղազննում	1 այց՝ մինչև շինարարական աշխատանքներ սկսելը	ծրագրով նախատեսված աշխատանքների մասին շահառուների իրազեկվածությունը ապահովելու նպատակով	ԿԾԿ
	բոլոր պահանջվող թույլտվությունները առկայություն	ԿԾԿ գրասենյակում, կապալառուի գրասենյակում	փաստաթղթերի ուսումնասիրում	1 այց՝ մինչև շինարարական աշխատանքներ սկսելը	աշխատանքների որակը ապահովելու նպատակով, փաստաթղթերի բացակայության պատճառով հետագա գործունեության իրականացման խաթարումը կանխարգելելու նպատակով	
	բանվորներին անձնական պաշտպանության միջոցները տրամադրված են և օգտագործվում են	շինարարական հրապարակում	տեղազննում	ամսեկան այցեր՝ շինարարության ընթացքում	կապալառուի անձնակազմին առողջության վնասի, վնասվածքների և մահվան դեպքերի կանխարգելման նպատակով	
Արտանետումների և փոշու առաջացում	շինարարական հրապարակում իրականացվում է ջրի ցողում՝ փոշու առաջացման հետ կապված աշխատանքների իրականացման ընթացքում,	շինարարական հրապարակում	տեղազննում	ամսեկան այցեր՝ շինարարության ընթացքում	օդի աղտոտումը կանխարգելելու և մոտակայքում գտնվող բնակչությանը պատճառվող անհանգստությունը նվազագույնի հասցնելու նպատակով	ԿԾԿ

	շինարարական հրապարակում արգելվում է շինարարական նյութերի / թափոնների բաց այրումը շինարարական տեխնիկան չի մատնված անգործության					
Աղմուկի առաջացում	շինարարության աղմուկը սահմանափակված է ցերեկային ժամերով	շինարարական հրապարակում	տեղազննում	ամսեկան այցեր՝ շինարարության ընթացքում	մոտակայքում գտնվող բնակչությանը պատճառվող անհանգստությունը նվազագույնի հասցնելու նպատակով	ԿԾԿ
Աղբի առաջացում	աղբի ժամանակավոր կուտակման վայրերը սահմանված են և պատշաճ օգտագործվում են շինարարական աղբը պարբերաբար հավաքվում է և տեղափոխվում համաձայնեցված աղբավայր	շինարարական հրապարակում	տեղազննում	ամսեկան այցեր՝ շինարարության ընթացքում	հրապարակի աղբոտումը, հողի և ստորերկրյա ջրերի աղտոտումը կանխարգելելու նպատակով	ԿԾԿ
Վտանգավոր թափոնների առաջացում (ինչպիսին են ասբեստը, ներկերը, լուծիչները և այլն)	Վտանգավոր թափոնները ներառում են տանիքից ապամոնտաժված ասբեստի սալիկները, որոնք պետք է մշակվեն ջրով և հեռացվեն հնարավորինս ամբողջական կտորներով, կուտակվեն առանձին վայրում որտեղ որևէ մեկը չի կարող դրանք վնասել, ժամանակին հեռացվեն շին. հրապարակից կամ փաթեթավորված կամ	դպրոցի տարածքում, աղբավայրի տարածքում	տեղազննում, փաստաթղթերի ուսումնասիրում	պարբերական այցեր	Վտանգավոր թափոնների պատշաճ ապամոնտաժումը, տեղափոխումը և հատուկ նախատեսված վայրերում տեղադրումը ապահովելու նպատակով	ԿԾԿ, ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն

	ծածկված վիճակում; քանդման և հեռացման աշխատանքներում ներառված է հատուկ ուսուցանված և համապատասխան անձնական պաշտպանության միջոցներ օգտագործող անձնակազմ					
Մոտակայքում գտնվող բնակիչների անհանգստության պատճառում՝ ոչ պատշաճ կայանված շինարարական մեխանիզմների և մեքենաների, շին. նյութերի և աղբի ժամանակավոր կուտակման, կապալառուի կողմից շին. հրապարակի աղբոտման պատճառով	շինարարական մեխանիզմների և մեքենաների կայանումը շինարարական հրապարակից դուրս արգելվում է Հետիոտնի և մեքենաների շարժման խոչընդոտումը շինարարական հրապարակում նյութերի / թափոնների կուտակման թափման պատճառով արգելվում է շին. հրապարակի շուրջ գտնվող սեփականություն հանդիսացող հողակտորների և/կամ այլ սեփականության միջով կապալառուի անձնակազմի անցնելը արգելվում է	շինարարական հրապարակի անմիջական հարևանությամբ գտնվող տարածքում	տեղազննում	ամսեկան այցեր, կամ կապալառուի կամ քաղաքացիների ահազանգման դեպքում	սեփականության, գույքի և բարեկեցության միջոցների վրա աբնարենպաստ ազդեցությունը կանխարգելելու նպատակով	ԿԾԿ
Երեխաների հետ աշխատող հիմնարկում	աշխատանքների իրականացում, երբ դպրոցը չի գործում	շինարարական հրապարակում	տեղազննում	ամսեկան այցեր՝ շինարարության ընթացքում	աշակետրների և դպրոցի աշխատակազմի անվտանգությունը ապահովելու նպատակով	ԿԾԿ

աշխատանքների իրականացում	Համապատասխան զգուշացնող նշանները տեղադրված են և լավ տեսանելի՝ հանրությանը բոլոր հնարավոր վտանգների վերաբերյալ նախազգուշացնելու նպատակով, այն դեպքում երբ դպրոցի տարածքը օգտագործվում է շինարարության ժամանակ (արտաժրագրային դասերի, խմբակների համար, դպրոցի անձնակազմի կողմից և այլն), նրանց անվտանգությունը երաշխավորվում է և հատուկ միջոցառումների են իրականացվում ըստ անհրաժեշտության					
Համայնքում իրականացվող աշխատանքներ	զգուշացնող նշանները տեղադրված են և լավ տեսանելի՝ հանրությանը բոլոր հնարավոր վտանգների վերաբերյալ նախազգուշացնելու նպատակով, մուտքը դեպի շին. հրապարակ թույլատրվում է միայն շինարարական աշխատանքներում ներգրավված անձնակազմին, դպրոցի տարածք մուտքը	շինարարական հրապարակում	տեղազննում	ամսեկան այցեր՝ շինարարության ընթացքում	հրապարակի աշխատանքային անվտանգությունն երաշխավորելու նպատակով	ԿԾԿ

	ենթարկվում է խիստ մոնիտորինգի, հետիոտնի համար տրամադրվում են անվտանգ անցումներ					
Բողոքների լուծման համակարգ (ԲԼՀ)	ԿԾԿ և Համաշխարհային բանկի ԲԼՀ տեղեկատվությունը հասանելի է և տեսանելի հանրության համար	ԲԼՀ մասին տեղեկատվություն տեղադրելու վայրերում ԿԾԿ գրասենյակում	տեղազննում	ամսեկան այցեր՝ շինարարության ընթացքում	հանրությանը և համայնքին շինարակական աշխատանքների իրականացմանը վերաբերող հարցերը բարձրաձայնելու, կարծիք տրամադրելու և բողեքները հնչեցնելու հնարավորություն ընձեռելու նպատակով	ԿԾԿ
ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ						
Դպրոցի կառույցի կառավարում	դպրոցի կառույցը պատշաճ շահագործվում է և պահպանվում, ներառյալ տաքացումը և օդափոխումը, հոսանքի մատակարարմաումը ու այլն	դպրոցի տարածքում	տեղազննում, փաստաթղթերի վերանայում	պարբերական այցեր	ապահով և հարման դպրոցական միջավայր ապահովելու նպատակով	ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Կոշտ թափոնների կառավարում	աղբը պարբերաբար հավաքվում է և տեղափոխվում դպրոցից և տեղադրվում համաձայնեցված վայրում	դպրոցի տարածքում	տեղազննում, փաստաթղթերի վերանայում	պարբերական այցեր	պատշաճ սանիտարական պայմաններ ապահովելու նպատակով	ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Ջրի կառավարում	ջրամատակարարման և կոյուղու համակարգերը պատշաճ կերով սպասարկվում են և գտնվում են լավ աշխատանքային պայմաններում,	դպրոցի տարածքում	տեղազննում, փաստաթղթերի վերանայում	պարբերական այցեր	պատշաճ սանիտարական պայմաններ ապահովելու նպատակով	ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

	կեղտաջրերի համակարգը պատշաճ կերպով սպասարկվում է և գտնվում է լավ աշխատանքային պայմաններում					
Դպրոցի առօրյա աշխատանք	համապատասխան զգուշացնող նշանները տեղադրված են և տեսանելի՝ երթևեկության մասնակիցներին մոտակայքում գտնվող դպրոցի մասին նախազգուշացնելու նպատակով, հետիտնի համար անցումները առկա են	դպրոցի տարածքում	տեղազննում, փաստաթղթերի վերանայում	պարբերական այցեր	անվտանգ ուսուցման միջավայր ապահովելու նպատակով	ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Ճանապարհային ոստիկանություն
Դպրոցի առօրյա աշխատանք	առաջին օգնության միջոցները առկա են դպրոցում, ուսուցիչները ուսուցանում են ստացել առաջին օգնության տրամադրման և մոտակա բուժկետին / հիվանդանոցին ահազանգելու վերաբերյալ, դպրոցի տարածքը պատշաճ կերպով ցանկապատված է, արգելափակոցները և սանդուղքները գտնվում են լավ տեխնիկական վիճակում	դպրոցի տարածքում	տեղազննում	պարբերական այցեր	անվտանգ ուսուցման միջավայր ապահովելու նպատակով	ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
	տարհանման պլանները տեղակայված են					ՀՀ Կրթության,

	հանրամատչելի վայրերում, ելքերը հստակ նշված են, աշակերտները և ուսուցիչները իրազեկված են արտակարգ իրավիճակներում իրականացվելիք գործողությունների մասին, դպրոցը կահավորված է համապատասխան հրշեջ միջոցներ					գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն
Բողոքների լուծման համակարգ (ԲԼՀ)	ապահովել, որ ԲԼՀ տեղեկատվությունը հասանելի և տեսանելի լինի հանրության համար	դպրոցում	տեղազննում	պարբերական այցեր	հանրությանը և համայնքի բոլոր բնակիչները ծրագրի իրականացմանը վերաբերող հարցերը բարձրաձայնելու, կարծիք տրամադրելու և բողեքները հնչեցնելու հնարավորություն ընձեռելու նպատակով	ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Հավելված 1. Ծրագրի տարածքի քարտեզ



	Կոորդինատներ	
	X	Y
1	8459418.3341	4518303.5786
2	8459418.7882	4518299.9647
3	8459421.2796	4518297.3078
4	8459432.3752	4518293.5539
5	8459494.8939	4518272.4018
6	8459521.5543	4518320.1607
7	8459525.8851	4518331.2097
8	8459533.7183	4518348.3854
9	8459536.0948	4518354.3223
10	8459528.4456	4518357.4392
11	8459541.1253	4518400.4014
12	8459508.2992	4518413.1671
13	8459482.1590	4518423.3328
14	8459471.0232	4518394.3093
15	8459455.4310	4518400.2845

Հավելված 2. Ծրագրի տարածքի և շինության ներսի լուսանկարներ

Հավելված 3. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

1. ԳՐԱՆՑՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲԵԿՏԻ ԱՆՎԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ԹՎԱՅԱԳՐԵՐԸ

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային համարանիշը՝ 06-001-0728-0029

Մակերեսը (հա)՝ 1.109

ESTATE CADASTRE

Վկայական N 29042016-06-0030, գաղտնագիր՝ DWPU8GPFKAWL

էջ 1

5. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Հ/Հ	Կադաստրային համարանիշ	Տեսակը	Մակերեսը (քառ.մետր)	Գրանցված իրավունքի տեսակը
1	06-001-0728-0029-001	Դաշտ	6598.1 քառ.մ.	Սեփականություն
2	06-001-0728-0029-002	Դաշտամերձ	91.02 քառ.մ	Սեփականություն
3	06-001-0728-0029-003	Էջ ենթակայան	55.9 քառ.մ	Սեփականություն

Լրացուցիչ նշումներ կամ տեղեկություններ

Գրանցման ամսաթիվ՝ ամսաթիվ, ամսաթվերի գրանցման համար

գրանցման ստորագրություն՝ անուն, ազգանուն, պաշտոն, ստորագրություն

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆ ESTATE CADASTRE

Վկայական N 29042016-06-0030, գաղտնագիր՝ DWPU8GPFKAWL

էջ 2

Հավելված 4. Շենքի տեխնիկական վիճակի և սեյսմակայունության վերաբերյալ տեխնիկական եզրակացությունը

(բերված է հայերեն ամփոփը, փաստաթղթի հայերեն լեզվով բնօրինակը կցված է սույն ԲՍԿՊ-ին)

Ս. Նալչռանյանի անվան թիվ 13 ավագ դպրոցի տարածքում «Բաբայան-ԼԱՏ նախագիծ» ՍՊԸ-ի կողմից կատարվել է ստուգայց-հետազննում՝ ուսումնասիրելու դպրոցական համալիրի մասնաշենքերի և այլ օժանդակ շենք-շինությունների կրող և պատող կոնստրուկցիաների տեխնիկական վիճակը, ինչպես նաև քննարկվող մասնաշենքերի կրող և պարփակող կոնստրուկցիաների վերակառուցման, նրանց ամրացման (սեյսմազինվածության բարձրացում մակարդակով) հնարավորությունը (բնօրինակը կցված է):

Ուսումնասիրվել և որոշվել են դպրոցի մասնաշենքերի առանձին կոնստրուկտիվ տարրերի ֆիզիկական մաշվածության աստիճանները:

Ըստ ՀՀ «Մեթոդական ցուցումներ» աղյուսակ 2-ի, դպրոցական առաջին մասնաշենքի ֆիզիկական մաշվածությունը դասվում է 3-րդ աստիճանի (անբավարար վիճակ), այսինքն կոնստրուկտիվ տարրերի շահագործումը հնարավոր է միայն կապիտալ նորոգումից հետո (մաշվածությունը `41 տոկոս), իսկ երկրորդ, երրորդ և տաքանցումային մասնաշենքերի ֆիզիկական մաշվածությունը դասվում է 2-րդ աստիճանի (բավարար վիճակ), այսինքն կոնստրուկտիվ տարրերը ընդհանրապես պիտանի են շահագործման համար, բայց պահանջում են որոշ կապիտալ նորոգում:

Ուսումնասիրության արդյունքներից և ՀՀՇՆ 20.06-2014 («ՀՇենքերի ն կառուցվածքների վերակառուցում, վերականգնում ն ուժեղացում. հիմնական դրույթներ»») շինարարական նորմերի և ՀՀՇՆ 2004-(«Երկրաշարժադիմացկուն շինարարության նախագծման նորմեր») շինարարական նորմերի պահանջներից ելնելով առաջարկվել է դպրոցական մասնաշենքերի վերակառուցման համար համապատասխան միջոցառումներ:

Հավելված 5. Շին. թույլտվություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Լոռու մարզ. Վանաձոր համայնք

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

N CPPS-0008-9545 03.11.2023թ.

Տրված է
կառուցապատող

Վերակառուցում (IV կատեգորիա) ճանապարհի ասֆալտապատման

Կառուցման հասցե, այդ թվում
Մարզ Լոռի, համայնք Վանաձոր բ. Ռուսաստանի փողոց 7 դպրոց հասցեում «Մ. Նալբանդեի անվան թիվ 13 տնային դպրոց ՊՈԱԿ վերակառուցում

կառուցապատող հարմար գտածը համաձայն գլխավոր հատակագծի վրա նշված ոչ նիմանան կառույցների

վրան

տեղադրման հասցե.

1. Օրենքի հոդվածների փաստաթղթեր

1) վերակի են «ՀՀՇՆՄՇՏ-ԼՍՏ ԼԵՌՆԱԿՈՒՄ» «ՀՀՇՆՄՇՏ-ԼՍՏ ԼԵՌՆԱԿՈՒՄ» ՍՊԸ 17488 կազմից

2) տարբ. են 15.03.2023 Գ-ԱԿՎՄՊ-23 գլխավորական դրական եզրակացություն (եզրակացությունները)

«ՀՊՆ-ՏՍԱԿ գլխավոր» ՍՊԸ 17488 կազմից

Հարգելի՛ Հ.Ն7 Հավելվածի 176-րդ կետով սահմանված բնագիրով
Հաշվի առնելով, որ կառուցվող օդային շինարարությունը հետաքրքիր չէ տարածքի հասակների վրա

հանգիստի տակ նշված մեկ նկարագրի և կամ շինության (շինությունների) բանական անվտանգության (տարածքների)

Օդային և գետնյա գծերի նկարագիր N:

որոնք ստեղծ թույլատրելիությունը նաև բանական թույլատրություն է:
Օդային բանական աշխատանքների իրականացնել հոդվածների փաստաթղթերով ամբողջությամբ հարգելով գրելը:

7. Այլ պայմաններ

8. Կառուցապատող շինարարական գործունեությունը ապահովագրելով աշխատանքների սկսելուց առնվազ 3 օր առաջ հանձնել N5 Հավելվածի N2-5 ձևի տեղեկագիրը Լ-ին գրավոր մարմնին:

9. Թույլտվության կիրառման ժամկետի շինարարական և փոքրածավալ աշխատանքներ կարող է իրականացվել բարեգործական Հանձնաժողովի որոշմամբ, հոդվածների փաստաթղթերին և հրդեհաբնակչական պահանջներին համապատասխան:

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ Ստեփան Մելքոնյան

ՊԵՏԱԿԱՆ

Հավելված 6. Աղբի հեռացման համաձայնագիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հասցեներն՝ Համայնքապետության Լոռու մարզի Վանաձոր հասցեներ
ՀՀ 2001, գ.Վանաձոր, Գիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040, 0322 22648,
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

N 01/2018 16 փետրվար 2023թ.

«ՎԱՆԱՁՈՐԻ Ա.ՆԱԼՊՐԱՆՑԱՆԻ ԱՆՎԱՆ
ԹԻՎ 13 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈՒԱԿ
ՏՆՕՐԵՆ ԳԱԳԻԿ ԷՄԻՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Էմինյան

Ի պատասխան Ձեր 09.02.2023թ. թիվ Ե-02-31 գրության

Հայտնում եմ, որ դպրոցի ներմանորոգմանը պայմանավորված շինարարական աղբը անհրաժեշտ է տեղափոխել Վանաձորի Տաղոն-4 բաղանատում գտնվող խոշոր եզրաչափի աղբահան, որի հեռավորությունը կազմում է 10կմ:

Հարգանքով

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

Կատ. Մ.Ն.Ի.Ի Բաղրի պետ՝ ազգային ճարտարապետ՝ Նորայր Ավոյան

Հավելված 7. Հանրային խորհրդակցության արձանագրություն

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Ս. Նալչռանյանի անվան թիվ 13 ավագ դպրոցի վերակառուցման նախագծի, բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի վերաբերյալ հանրային քննարկում

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 2023թ.-ի մայիսի 10-ին՝ ժամը 15:30-ին, Վանաձորի համայնքապետարանում (ՀՀ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22) տեղի ունեցավ «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագրի շրջանակում վերակառուցվող Ս. Նալչռանյանի անվան թիվ 13 ավագ դպրոցի նախագծի, ԲՍԿՊ-ի և նախատեսվող գործունեության Շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հանրային քննարկում (1-ին հանրային քննարկում):

Հանրային քննարկման մասին հայտարարությունը սույն թվականի ապրիլի 27-ին տեղադրվել է ՀՀ ԿԳՄՄՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ՇԻԳ-ի պաշտոնական կայքում (info@cfep.am):

Ծրագրի անվանում՝ ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Ս. Նալչռանյանի անվան թիվ 13 ավագ դպրոցի վերակառուցում «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագրի շրջանակում:

Ծրագրի իրականացնող կազմակերպություն՝ ՀՀ ԿԳՄՄՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ՇԻԳ:

Նախագծային կազմակերպություն՝ «Բաբայան- ԼԱՏ» ՍՊԸ:

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ

Համանքապետարանի աշխատակիցները

Գ. Էմինյան՝ Ս. Նալչռանյանի անվան թիվ 13 ավագ դպրոցի տնօրեն

Մ. Սարիբեկյան՝ ՀՀ ԿԳՄՄՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ՇԻԳ-ի ավագ դպրոցների հիմնանորոգման աշխատանքները համակարգող/ճարտարապետ

Հ. Բաբայան՝ «Բաբայան -ԼԱՏ» ՍՊԸ տնօրեն, նախագծող-ճարտարապետ

Ա. Կարապետյան՝ ՀՀ «Կրթական ծրագրերի կենտրոն» ՇԻԳ-ի շրջակա միջավայրի և սոցիալական մասնագետ :

Մասնակցում էին նաև ուսուցչական և ծնողական կազմը, այլ շահագրգիռ կողմեր Մասնակիցների ընդլայնված ցանկը (4 էջ) և տեսաձայնագրությունը ներկայացվում է կից:

Օրակարգում

1) «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագրի ներկայացում շահագրգիռ կողմերին
2) Վերակառուցվող դպրոցի նախագծի ներկայացում
3) Ենթածրագրին առաջադրվող բնապահպանական և սոցիալական պահանջների, բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի ներկայացում
4) Հարց ու պատասխան շահագրգիռ կողմերի հետ

Ելույթ ունեցան

1. ՀՀ ԿԳՄՄՆ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Ս. Նալչոանյանի անվան թիվ 13 ավագ դպրոցի տնօրեն Գ. Էմինյանը հանդես եկավ բացման խոսքով, ներկայացրեց հանրային քննարկման իրականացման նպատակները և կարգը:
2. ՀՀ ԿԳՄՄՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի ավագ դպրոցների հիմնանորոգման աշխատանքները համակարգող/ճարտարապետ Մ. Սարիբեկյանը, ով ներկայացրեց ծրագրի հիմնական նպատակները, ենթածրագրերի իրականացման ընթացակարգը և հիմնական փուլերը:
3. Ծրագրի նախագծող-ճարտարապետ Հ. Բաբայանը, ով ներկայացրեց վերակառուցվող դպրոցի նախագիծը և հիմնական ճարտարապետական լուծումները:
4. ՀՀ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի շրջակա միջավայրի և սոցիալական մասնագետ Ա. Կարապետյանը, ով ներկայացրեց շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրականացման կարգը օրենսդրական պահանջները, քաղաքականության շրջանակը, ՀԲ-ի բնապահպանական քաղաքականությունը ինչպես նաև բնապահպանական և սոցիալական կառավարման պլանը:

Հարցեր տրվեցին

5. Հարց հնչեց, թե որքան ժամանակ է հարկավոր վերակառուցման աշխատանքների իրականացման համար: Գ. Էմինյանը պատասխանեց, որ աշխատանքների իրականացման համար նախատեսվում է քսանչորս ամիս, սակայն մի շարք տեխնիկական պայմաններից ելնելով այդ ժամանակահատվածը կարող է փոփոխվել:
6. Հարց բարձրացվեց ցանկապատման վերաբերյալ, որին Գ. Էմինյանը պատասխանեց, որ նախատեսված է երկու տիպի ցանկապատ: Իսկ Հ. Բաբայանը հավելեց, որ հաշվի առնելով դպրոցի տեղադիրքը, ռելիեֆի առանձնահատկությունները ընտրված ցանկապատերը էսթետիկ առումով ևս նախընտրելի կլինեն: Նշվեց նաև, որ անվտանգության նկատառումներից ելնելով բացթայա մարզահրապարակների շուրջ կտեղադրեն ճաղաշարեր:

7. Հարց հնչեց հնարավոր ծառահատման վերաբերյալ, որին ի պատասխան Ա. Կարապետյանը պատասխանեց, որ հատման ենթակա է 3 ծառ, որոնց փոխարեն կտնկվեն 14 նոր ծառեր:
8. Հարց հնչեց նաև աշակերտների թվի վերաբերյալ, որին ի պատասխան Գ. Էմինյանը պատասխանեց, որ դպրոցում ներկա պահին ուսանում է 150 /հարյուր հիսուն/ աշակերտ, իսկ դպրոցի վերակառուցումից հետո շենքի տարողունակությունը կկազմի 400 / չորս հարյուր/ աշակերտ:
9. Հարց հնչեց հետագայում դպրոցի մասնաշենքերի պահպանման հետ կապված: Գ. Էմինյանը պատասխանեց, որ << <<Հանրակրթության մասին>> նոր 2022թ.-ին փոփոխված օրենքի համաձայն դպրոցի ֆինանսավորման մեջ դպրոցի պահպանման ծախսերը չեն ներառվելու: Փոխարենը մեկ այլ հոդվածով առանձին կփոխանցվի տվյալ գումարը, ինչն էլ կօգտագործվի բացառապես շենքի պահպանման նպատակով:
10. Դպրոցի տնօրեն Գ. Էմինյանը հարցեր բարձրացրեց հողահատկացման, աղբամանների տեղափոխման ինչպես նաև ասֆալտապատման վերաբերյալ: Համայնքապետարանի Ներկայացուցիչները խոստացան ուսումնասիրել, քննարկել և հնարավորության դեպքում աջակցել:
11. Հարց հնչեց վերակառուցման ողջ ժամանակահատվածում ուսումնական գործընթացի կազմակերպման մասին: Գ. Էմինյանը նշեց, որ պատկան մարմինների հետ քննարկվում են հնարավոր տարբերակները և վերջնական որոշում դեռևս չի կայացվել:
12. Հարց բարձրացվեց դասասենյակների մակերեսների վերաբերյալ; Հ. Բաբայանը նշեց, որ բավարարելու են նորմերով սահմանված բոլոր պահանջներին:

Վանաձորի համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղարի ժ/պ
Հայկ Վիրաբյան

Նիստը արձանագրող
Լիլիթ Խաչատրյան
Վարող՝ Ս. Նալչդանյանի անվան
թիվ 13 ավագ դպրոցի տնօրեն Գ. Էմինյան
Արձանագրող՝«Կրթական ծրագրերի կենտրոն»
ԾԻԳ-ի ՇՄ և սոցիալական մասնագետ Ա. Կարապետյան

Ձեռնարկող՝ ԳՄՄՆ «Կրթական ծրագրերի կենտրոն»
ԾԻԳ-ի տնօրենի պաշտոնակատար Գ. Հովհաննիսյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Ս. Նալչռանյանի անվան թիվ 13 ավագ դպրոցի վերակառուցման նախագծի և ԲՍԿՊ-ի փոփոխության վերաբերյալ հանրային քննարկում

2025թ.-ի հուլիսի 19-ին՝ ժամը 12:00-ին, Վանաձոր քաղաքում (ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Շինարարների 12 հասցեում) տեղի ունեցավ ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի վերակառուցվող Ս. Նալչռանյանի անվան թիվ 13 ավագ դպրոցի նախագծի և ԲՍԿՊ-ի փոփոխության վերաբերյալ հանրային քննարկում.

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ

Մասնակցում էին Ա. Կարապետյան՝ Շրջակա միջավայրի և սոցիալական մասնագետը, <<Ախուրյանի Կոոպշին>> ՍՊԸ-ի Շրջակա միջավայրի և սոցիալական մասնագետը, աշղեկը, դպրոցի տնօրենը, ուսուցչական անձնակազմը, համայնքի բնակիչները, այլ շահագրգիռ կողմեր: Մասնակիցների ընդլայնված ցանկը (2 էջ) ներկայացվում է կից:

<u>Օրակարգում</u>

1) Կառուցվող մարզադահլի կառուցմամբ պայմանավորված նախագծի և ԲՍԿՊ-ի փոփոխության ներկայացում
2) Հարց ու պատասխան շահագրգիռ կողմերի հետ

Ելույթ ունեցան

1. ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Ս. Նալչռանյանի անվան թիվ 13 ավագ դպրոցի տնօրեն՝ Գ. Էմինյանը հանդես եկավ բացման խոսքով,

ներկայացրեց հանրային քննարկման իրականացման նպատակը և կարգը:

2. <<Ախուրյանի Կոոպշին>> ՍՊԸ-ի աշղեկ Ա. Բաղդասարյանը, ով ներկայացրեց մարզադահլիճի կառուցման ընթացակարգը և հիմնական փուլերը:
3. Շրջակա միջավայրի և սոցիալական մասնագետ Ա. Կարապետյանը, ով ներկայացրեց փոփոխված ԲՍԿՊ-ն:

Հարցեր տրվեցին

4. Հարց հնչեց աշխատանքների հնարավոր երկարաձգման վերաբերյալ վերաբերյալ, ինչին ի պատասխան աշղեկը պատասխանեց, որ աշխատանքները կավարտվենս սահմանված ժամեկտներում:
5. Հարց հնչեց թե ինչպիսի նյութեր են օգտագործվելու մարզադահլիճի նեքին հարդարման համար, ինչին ի պատասխան Ա, Կարապետյանը նշեց, որ հարդարման բոլոր նյութերը պետք է լինեն էկոլոգիապես մաքուր, համապատասխանեն հրդեհային անվտանգության, սանիտարահիգիենիկ և այլ գործող պահանջներին.
6. Մասնակիցներից հարց հնչեցվեց թե մարզադահլիճի հատակները ինչ նյութվ են իրականացնելու. Գ. Էմինյանը պատսխանեց նշելով որ Մարզադահլիճի հատակները իրականացնել սպորտային վինիլային ծածկույթով, բացառությամբ աստիճանավանդակների և աստիճանահարթակների սենքերի, իսկ հանդերձարանների և սանհանգույցների հատակները՝ մամլոգրանիտե կամ գլազուրե սալիկներով:

Պատասխանատու՝

Վարող՝ ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Ս. Նալչռանյանի անվան թիվ 13 ավագ դպրոցի տնօրեն Գ. Էմինյան
Արձանագրող՝ ՀՀ ԿԳՄՍՆ ''Կրթական ծրագրերի կենտրոն'' ծրագրերի իրականացման գրասենյակ Շրջակա միջավայրի և սոցիալական մասնագետ Ա. Կարապետյան

Ձեռնարկող՝ ԿԳՄՍՆ ''Կրթական ծրագրերի կենտրոն'' ծրագրերի իրականացման գրասենյակ տնօրեն Գ. Հովհաննիսյան